

Դասական Ժամկետային ավանդ

Լրացուցիչ տեղեկատվություն

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է « Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	մինչև 10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 5 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով

- Հաշվի սպասարկումն (անկախ հաշիվների քանակից և գործարքների իրականացումից) անվճար է:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի պահպանման սակագները սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներին համապատասխան:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի փակման դեպքում հետագայում ավանդ ներդնելու նպատակով դրա վերաբացումն անվճար է:
- Ավանդային հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանց դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
- Բանկն ավանդի գումարի վրա տոկոսագումարները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքով: Հաճախորդի ցանկությամբ տոկոսագումարները կարող են վճարվել ավանդի արժույթով:
- *Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույթի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարումներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:*
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

- Դրամային ավանդը նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում 1 (իրավաբանական անձանց դեպքում՝ 3) բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 1% չափով:
- Արտարժությային ավանդը նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում 1 (իրավաբանական անձանց դեպքում՝ 3) բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 0.1% չափով:
- Ավանդատուի ցանկությամբ ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել նույն տևողությամբ և սովյալ տարում գործող տոկոսադրույքով՝ առանց Բանկ այցելելու:
- Եթե կնքվել է առանց երկարաձգման հնարավորության պայմանագիր, դրա ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո ժամկետային ավանդի գումարը չպահանջելու դեպքում, գումարը փոխանցվում է ավանդատուի ընթացիկ հաշվին ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- Տվյալ ավանդային հաշվի համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ստացված տոկոսագումարները համաձայն ՀՀ գործող օրենսդրության ենթակա են հարկման 10%-ի չափով:
- Հաճախորդին հաշվի քաղվածքի (այս թվում՝ կրկնօրինակի) տրամադրում - անվճար
- Փաստաթղթերի կրկնօրինակը տրամադրվում է՝
 - մինչև 3 ամիս վաղեմության դեպքում՝ 1,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
 - 3 -12 ամիս վաղեմության դեպքում՝ 2,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
 - 1- 3 տարի վաղեմության դեպքում՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
 - 3 տարուց ավել վաղեմության դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Տեղեկանքները տրամադրվում են՝
 - առդիտորական հարցման պատասխան՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
 - այլ տեղեկանքներ՝ 3,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է, և ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԸ երաշխավորում է դրա գաղտնիությունը:
- Ավանդային պայմանագրից ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: